Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԾՁԲ-23/1-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 14 դեկտեմբերի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ա. Մարգարյանը
անդամներ՝ Ա. Սիմոնյանը, Կ. Սարգսյանը, Ն. Ավետյանը և Լ. Գալֆայանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար Արմավիր, Էջմիածին, Արտաշատ և Երևան ՋՕԸ-երի սպասարկման տարածքներում ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում ՍԿԱԴԱ SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման ՋԿ-ԳՀԾՁԲ-23/1-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ **«Ռիջիդ» ՍՊԸ-ի և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի** կողմից՝ սահմանված ժամկետում ներկայացվել են գնահատող հանձնաժողովի 08.12.2022թ. թիվ 2 որոշմամբ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերով մասնակից «Ռիջիդ» ՍՊԸ-ի կողմից շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները: **«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որը չի համապատասխանում հրավերի 8.18 կետի պահանջներին:

«Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ փաստաթղթերը ներկայացվել են գնահատող հանձնաժողովի 08.12.2022թ. թիվ 2 որոշմամբ սահմանված ժամկետից ուշ և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որը չի համապատասխանում հրավերի 8.9, 8.10 և 8.18 կետերի պահանջներին:

Հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-23/1-Տ ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Ռիջիդ» ՍՊԸ -ին,
2. Ընթացակարգի մասնակիցներ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի և «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի հայտերը մերժել՝ ՋԿ-ԳՀԾՁԲ-23/1-Տ ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով,

3. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԳՀԾՁԲ-23/1-Տ ծածկագրով ընթացակարգի համար անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը,

4. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ԳՀԾՁԲ-23/1-Տ ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից «Ռիջիդ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Ա. Մարգարյան
անդամներ	_____	Ա. Սիմոնյան
	_____	Կ. Սարգսյան
	_____	Ն. Ավետյան
	_____	Լ. Գալֆայան
Քարտուղար	_____	Ա. Սարգսյան